

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԷՄԱՆՈՒԻԼ ԿԱՆՏԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԳՅՈՒԹԵԻ ԱՏԵՂԾԱԾ ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ

Սկսած 18-րդ դարից՝ գերմանացի մշակութաբանները տարբեր մշակույթների յուրացման և տարածման ռաիվիթաներին անվանում են kulturträger (մշակույթի կրողներ): Քաղաքակրթությունների փոխադարձ ներթափանցումը, որի գլխավոր արդյունքն է նյութական և հոգևոր մշակույթի փոխանակումը և ժողովուրդների հոգևոր մերձեցումը, տեղի է ունենում խաղաղ պայմաններում առաջին հերթին ապրանքների փոխանակմամբ զբաղվող վաճառականների կամ հետաքրքրասեր ուղեգնացների ու ծանապարհորդների ջանքերով, իսկ պատերազմների ժամանակ՝ ռազմական գործողությունները գրի առնող ու նկարագրող զորավարների շնորհիվ: Պատահական չէ, որ անտիկ ժամանակներից հունա-հռոմեական պատմագրության մեջ զգալի թիվ են կազմում հենց զորավար-պատմագիրները:

Մ.թ.ա. 401-400 թվերին պարսկական անհաջող արշավանքից հետո հելլենական Բյուրի հետ Հայաստանով Հելլադա վերադարձող պատմագիր-զորավար Քսենոփոնը, այլ հելլեն զորավարների ու զինվորների հետ հայերի գետնափոր տներում հյուրընկալվելով և նրանց կարասներից՝ լողացող գարու հատիկներով զարմանալի ոգեշնչող հեղուկը, ինչպես և պահունի գինին վայելելու ժամանակ ունկնդրել է հայ վիպերգուների պատմած հին ավանդությունը մ.թ.ա. 6-րդ դարի սկզբին իշխած Հայոց Արմենիոս թագավորի մասին և այդ նյութի հիման վրա ստեղծել է իր «Կյուրոսապատում» (Կյուրոպեդիա) մեծարժեք պատմավեպը: Բացի այդ, նրա «Անաբասիս» նշանավոր երկի բազմալեզու թարգմանությամբ, շատ ժողովուրդների մեջ տարածվեց հայկական գարեջրի մասին հնագույն վկայությունը: Ահավասիկ, նյութական և հոգևոր մշակույթի տարածման և հեռավոր բազմազգ սերունդներին փոխանցելու երկու բացառիկ օրինակ, թեև մենք՝ հայերս, մինչև հիմա հարկ եղած չափով չենք օգտվել երկուսուկես հազարամ-

յակ առաջ մեծանուն հույն զորավար-պատմագրի մեզ պարզևած այդ պատվական ժառանգությունից:

5-րդ դարի սկզբին ստեղծված հայերեն Ազաթանգեղոսի Պատմության Առաջաբանը հրաշալի դրվագներ է պատկերում հեռավոր երկրներ ծովային ուղևորություն կատարող նավաստիների մասին, որոնք մրրկածուփ ալիքները հաղթահարելով և իրենց կյանքը վտանգելով՝ հեռու աշխարհներից բերում են ոչ միայն դեղաբույսեր և անուշաբույր համեմունքներ, թանկարժեք մարգարիտ ու զարդեր թագավորներին ճոխացնելու համար, այլև զբաղվում են «խոսքի վաճառականությամբ», այսինքն՝ այցելած ժողովուրդների մոտ հավաքում են պահպանվող հայրենի պատմության վերաբերյալ անցյալի հետաքրքիր դրվագներ, որոնցով հարստացնում են ազգային դպրությունը: Այս եզակի Առաջաբանը հեռավոր կղզիներից ու երկրներից նյութական և հոգևոր արժեքների ներկրման ամենավաղ ճոխ նկարագրությունն է նորաստեղծ հայ դպրության սկզբնավորման ժամանակից և իբրև այդպիսին եզակի հետաքրքրություն է ներկայացնում նաև եվրոպացի հետազոտողների համար: «Իսկ իմ անցեալ սահեալ շրջեալ ի վերայ յորձանախոր... ալեացն, սրավարացն մոլեգնելոցն, ձգտեալ ի կղզիս քաղաքացն և յաշխարհս հեռաբնակս, գտեալ լցեալ մեծաբեռն խստաբեռունս, ինչ ինչ պատուական և արգոյ, ի զարդ և յօգուտ՝ եկեալ հասուցաք ի կայս հանգստեան ձերոյ օգտութեան. փութացեալ բացցուք զթանգարական վաճառս խանթից վաճառեսցուք լսելեաց զգիտս աշխատութեան մերոյ, առնուլ զունկնդրութիւն և տալ զպատմութիւն»¹:

Վերջին տարիներս աշխույժ գործածության մեջ մտած «Մետաքսի ծանապարհ» արտահայտությունը գլոբալացման ներկա ժամանակաշրջանին բնորոշ դրսևորումներից է: «Մետաքսի ծանապարհ»-ը հնագույն ժամանակներից առաջադիմության ձգտող զանազան ազգերը կապել է հեռավոր Արևելքի հնագույն քաղաքակրթության երկրի՝ Զինաստանի հետ, որին 5-րդ դարի Պատմահայր Մովսես որենացին համարում է «հյուսիս-արևելյան քաջատոհմիկ և գլխավոր աշխարհ», իսկ ձենաց ազգը՝ «բոլոր հյուսիսային ազգերից առաջինը»² և իր Հայոց Պատմության մեջ ներկայացնում է այդ սիրամարգաշատ և բազմամետաքս երկրի ճոխ բնությունը, ժողովրդի գունագեղ կենցաղով հանդերձ. «Աքանչելի է և աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց,

1 Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, «17:

2 Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, Բ, 2Ա, էջ 221:

և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և հրեշից, և որ էշայծենունսդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ զփասեան և զպոր, և այլք այսպիսիք: Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղագս աշխարհին ճենաց»³: Չինաստանի այս նկարագրութիւնը հնագույնն է հայ մատենագրութեան մեջ և թերևս նաև Առաջավոր Ասիայի և Եվրոպայի աշխարհագրական երկերում: որենացու բերած այս նկարագրութիւնը չի կարող բացառապես գրական ծագում ունենալ, այլ արդյունք է նաև հայ ուղեգնացների և դեպի Հնդկաց երկիր նավարկող ականատես հայ նավաստիների տեղեկատվության, որի մասին ակնարկում է Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանը:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Իմանուիլ Կանտը (1724-1804), որն իր երկարամյա ակադեմիական դասախոսություններում մշակել է նաև փիլիսոփայական մարդաբանության (անտրոպոլոգիայի) հիմունքները, 1796/97 թվերին ի մի բերելով իր 20-ամյա ակադեմիական դասախոսությունները և փիլիսոփայական հայացքները գործնական մարդաբանության վերաբերյալ, դրանք շարադրեց առանձին գրքով և հրատարակեց 1798 թվականին «Anthropologie in pragmatischer Hinsicht» («Անտրոպոլոգիան պրագմատիկ տեսանկյունից») վերնագրով: Ուսումնասիրության մեջ Կանտը մանրամասն անդրադարձել է եվրոպական ազգերի յուրահատուկ գծերին՝ շատ կողմերից դիպուկ ներկայացնելով բրիտանացիների, ֆրանսիացիների, իսպանացիների, գերմանացիների, հույների, ինչպես և ասիական որոշ ազգերի էթնիկ բնութագիրը: Կանտի նրբանկատ դիտողականությունը երևան է հանել նշված ազգերի շատ բնորոշ հատկանիշներ, որոնք 18-րդ դարից հետո էլ մինչև այժմ բնութագրական են նրանց համար: Չափազանց հետաքրքիր են այս առումով բնավորության այն ուրույն գծերը, որ ավելի քան 200 տարի առաջ նկատել է գերմանացի մեծ մարդաբան փիլիսոփան հայերի մեջ: «Քրիստոնյա մյուս ժողովրդի՝ այն է հայերի մեջ տիրապետում է մի ինչ-որ յուրատեսակ առևտրական ոգի. նրանք զբաղվում են ապրանքափոխանակությամբ, ոտքով ձամփորդում են Չինաստանի սահմաններից մինչև Կորսո հրվանդանը Գվինեայի ծովափին: Դա ցույց է տալիս այդ խելամիտ և ժրաջան ժողովրդի

3 Խոր., Բ, 2Ա, էջ 223:

առանձնահատուկ ծագումը, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևելյան ուղղությամբ անցնում է գրեթե ամբողջ Հին Աշխարհով և կարողանում է սիրահոծար ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մոտ, որոնց հետ նրանք շփվում են: Դա ապացուցում է նրանց բնավորության գերազանցությունը, որի սկզբնական ձևավորումը մենք այլևս չենք կարող հետաքննել՝ այժմյան հույների թեթևամիտ և քծնող բնավորության հետ համեմատած»:

Այս պահից սկսած, Կանտի վկայության համաձայն՝ «Մետաքսի ճանապարհի» քարտեզի վրա հայ վաճառականների երթևեկության արևմտյան սահմանակետ պետք է համարել Արևմտյան Աֆրիկայի Կորսո հրվանդանը՝ Գվինեայի ծովափին, մինչև ուր սիրալիր ընդունելության էին արժանանում Չինաստանից եկող հայ վաճառականները:

Այս երևելի գծերը, որ ի հայտ է բերում գերմանացի մեծ մտածողը հայերի, իբրև առաջավոր մշակույթ կրող ու տարածող ժողովրդի գործունեության մեջ, չէին կարող անարձագանք մնալ և չարժանանալ գերմանական, ինչպես և եվրոպական առաջավոր մտածողների ու գրականության մեծերի ուշադրությանը:

Կանտի աշխատությունը, լույս տեսնելուն պես, անմիջապես արժանացավ մեկ այլ գերմանացի մեծ մտածողի՝ բանաստեղծ Յոհան Վոլֆգանգ Գյոթեի բարձր դրվատանքին: Նույն 1798 թ. դեկտեմբերի 19-ին Շիլլերին գրած նամակում Գյոթեն ուշադրություն է հրավիրում հենց նոր ընթերցած շատ հետաքրքիր աշխատության վրա՝ «Կանտի Անտրոպոլոգիան ինձ համար շատ արժեքավոր գիրք է և ապագայում կարող է ավելին լինել, երբ ես վերստին այն ըմբռնեմ փոքրիկ չափաբաժիններով...»: Ընդամին, ակնարկելով եվրոպական զանազան ազգերի բնավորություններում Կանտի նկատած կենցաղային մակարդակի թուլությունները՝ Գյոթեն նրա որոշ դիտողությունները զավեշտալի է համարում: Անշուշտ հայերին տրված Կանտի այս բարձր և բնորոշ գնահատականն է եղել պատճառը, որ գերմանացի հանձարեղ բանաստեղծ Գյոթեն փորձել է ստեղծել վաճառական հայ քարավանապետի կերպարը: Գյոթեի ստեղծած գեղարվեստական վիթխարածավալ ստեղծագործության մեջ գտնում են մի փոքրիկ բանաստեղծություն՝ «Թողե՛ք, որ ես լամ...», որի մեջ հանդիպում է «Armenier» (հայ) մարդու կերպարը: «Արևմտա-արևելյան դիվան» վերտառությամբ բանաստեղծական ժողովածուի⁴ ութերորդ գրքում («Suleika Nameh»-«Գիրք Չուլեյկայի») գիշերային անծայրածիր անապատում

4 Գրվել է 1814-1819 թվերին և բաղկացած է 12 գրքից:

քնած ուղտերի և ուղտապանների մեջ արթուն են միայն երկուսը՝ հայ քարավանապետը և նրա կողքին բազմած գերմանացի բանաստեղծը, որ սիրում էր իրեն պատկերել պարսիկ բանաստեղծ Հաֆեզի կերպարով, ինչպես «Արևմտա-արևելյան դիվան»-ի երկրորդ գրքում («Hafis Nameh»-«Գիրք Հաֆիզի»): Ու մինչդեռ հայ քարավանապետը ցերեկվա հոգսաշատ ծանապարհից հետո իր մտքում լռելյայն հաշիվներ է անում, բանաստեղծը մտովի հաշվում է վաղվա անցնելիք երկար ու ձիգ ծանապարհի ոլորանները, որոնց վերջում նրան սպասում է իր երազած Չուլեյկան: Պարսկուհու այս անունը հանդիպում է Գյոթեի նաև այլ բանաստեղծություններում, բայց հայ քարավանապետի կերպարի առկայությամբ այն յուրահատուկ գունեղանգ է ստանում, երբ գերմանացի մեծ բանաստեղծի գրչի տակ դրանք մեկտեղվում են իբրև հայի գործնական բնավորության և պարսկական արևելյան ումանտիկայի խորհրդանիշեր.

*Թողե՛ք, որ ես լամ, գիշերն է պատել
Ինձ անապատում այս անծայրածիր.
Քնած են ուղտեր և ուղտապաններ,
Հայն արթուն՝ մտքում հաշիվ է անում.
Մինչ ես իր կողքին՝ չափում եմ ուղին,
Որ բաժանում է ինձ Չուլեյկայից,
Համրելով տաղտուկ, ծամփա երկարող
Կեռմանները ձիգ...⁵*

Ազուլիսի և պատմական Հին Ջուղայի, Սալմաստի, Սպահանի ու Նոր Ջուղայի հայ վաճառականների շիտակության և ազնվության մասին բազմաթիվ գրույցներ են պահպանվել ժողովրդական ավանդություններում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Իրանի բազմաթիվ ազգագավառներում: Պատմում էին, թե օտարազգի վաճառականները Պարսկաստան գալով՝ հայ խոջաների անուններ էին ընդունում, որպեսզի վստահություն ձեռք բերեն իրենց քարավանների համար:

Բայց եկավ մի ժամանակ, երբ «Մետաքսի ծանապարհին» դարանակալող քոչվոր ավազակներն ու գանձագողերը՝ օղուգ Օսմանի գլխավորությամբ ստեղծեցին Օսմանյան կայսրությունը և պատուհաս դարձան քաղաքակրթության բարձունքների հասած ժողովուրդների համար:

1919 թվականին անգլիացի խորհրդավոր հետախույզ Թոմաս Լորենսի հետ, որ առավել հայտնի է Լորենս Արաբացի անվամբ, հար-

⁵ Թարգմ. Ա.Մուշեղյանի – Գյոթե, *Վայմարյան քնար*, Երևան, 1985, էջ 130:

ցագրույց է անցկացրել ամերիկացի հայտնի լրագրող Լինքոլն Սթեֆընսը: Հարցազրույցը՝ հեղինակի մտորումներով ու վերլուծությամբ, առանձին գրքույկով հրատարակվել է 1931թ.՝ «Այդ անտանելի հայերը» վերնագրով: Ինչու՞ էր անգլիացի հետախույզը հայերին համարում «անտանելի»: «Հայերը, ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից, - նշում է բրիտանացի հետախույզը, - Հրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում. ճիշտ նույն կերպ էլ հույները, թուրքերը և բոլոր այն մյուս ցեղերը, որոնք երբևէ գործ են ունեցել հայերի հետ: Չգում են, որ հայերը բոլորին էլ աշխատանքի կլծեն: Ու կլծեն: Հայերն ունեն հրեաների բոլոր հատկանիշները, առավել՝ բոլոր մյուս ցեղերի էլ բոլոր հատկանիշները, և բացի այդ քրիստոնյաներ են»⁶: Բայց հենց այս պատճառով Թոմաս Լորենսը գտնում է, որ հայերին պետք է ոչնչացնել, որովհետև նրանք ընդունակ են ստրկացնել և շահագործել բոլոր ժողովուրդներին: Առաջին համաշխարհային պատերազմի արյունալի արհավիրքներով անցած Լորենս Արաբացու այս արյունոտ լուր տեսակետը ցեղասպանության ենթարկված հայության մասին, 20-րդ դարին բնորոշ ռասիզմի դրսևորումն է և տրամագծորեն հակառակ է 18-րդ դարի վերջին հայերի վերաբերյալ Իմանուիլ Կանտի տված բարձր գնահատականին, ովքեր իրենց դյուրահաղորդ վերաբերմունքով «կարողանում են սիրահոժար ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մոտ, որոնց հետ նրանք շփվում են»:

Հայոց ցեղասպանության ակնատես և ամենաբուռն ցասումով ցեղասպանությունը դատապարտող Արմին Թեոֆիլ Վեգներն իր ,Ճիշ Արարատիցե պամֆլետում (1922 թ.) հայ ժողովրդին բնորոշում է իբրև Արևելքի և Արևմուտքի մշակույթներն իրար շաղկապող կամուրջ. «Եթե կա մի ազգ, որ այս պատերազմից հետո արժանացել է համայն աշխարհի կարեկցանքին, ապա դա հայությունն է ու նրա ձակատագիրը: Արևելքի և Արևմուտքի սահմանագծում, Կովկասյան այն լեռների ստորոտում, որ պատմությունն անվանել է ժողովուրդների կամուրջ, այս ժողովրդին վաղուց հետե հերոսական խնդիր էր վիճակված՝ միջնորդ դառնալ երկու մշակույթների միջև, մի խնդիր, հատկապես ձակա-

⁶ Հարցազրույցը Կարպիս Սուրենյանցի հայերեն նոր թարգմանությամբ - «Անդին» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր, N 1, 2013, էջ 47-57:

տագրական այն պատճառով, որ այս ժողովուրդը՝ արևելյան բարբարոս հորդաներով շրջապատված, վաղ դարերից ի վեր հակված էր Արևմուտքի մշակույթների կողմը: Եվրոպայի խորը անկման ողբալի ու ամոթալի նշանն է դա, որ մենք թույլ տվեցինք անապատի պես ամալացնել հենց այդ երկիրը, և որ նրա բնակիչները, իրենց հարազատ տուն ու տեղից քշված, ողբալի գոյություն են քարշ տալիս օտար երկնքի տակ: Ատելությունն ու անբանականությունը խորտակեցին ժողովուրդների կամուրջը, որի բեկված սյուները դուրս են ցցվել գորշության նեխած ձահձից: Բայց թեև, այսօրան հուսախաբություններից հետո էլ, Հայաստանն այլևս չի կարող ակնկալել, որ իրեն գոհացում տան Արևելքի երկրների վերաբերյալ հաշտության բանակցությունները, որի համար այժմ երկրորդ անգամ խորհրդակցության են հավաքվել աշխարհի տերությունները, այսուհանդերձ նա երբեք էլ չպիտի դադարի հավատալ իր ազատագրմանը: Որովհետև նրանց համար, որ այդքան կրքոտ սիրով կառչած էին իրենց մի թիզ հողին, որ անապատում իրենց մահվան թափորի ժամին էլ մի բուռ հայրենի հող էին տանում շորերի լաթերի մեջ, որպեսզի մեռնելիս դնեն գլխատակին, նրանց երկիրը մշտապես մի զորացնող մայր կլինի և գաղտնախորհուրդ զորությամբ լեցուն՝ պիտի բանա իր արնաշաղախ գիրկը, որ նոր ընձյուղներ արձակի իր ընդերքից: Այս տարաբախտ ժողովրդի վերջին բեկորների հայացքները հավատով սևեռված են Արարատի գագաթին, ուր մի ժամանակ Նոյի աղավնին բերեց խաղաղության ձիթենու ձյուղը»⁷:

Բանալի բառեր. – Էմանուիլ Կանտ, Գյոթե, մշակույթի կրողներ, ավանդություն, ազգ, պատմագրություն:

7 Արմին Թեոֆիլ Վեգներ, «Ճիշ Արարատից» (1922) (թարգմ.՝ Ա. Մուշեղյանի) հետևյալ գրքում – Վեգներ, *Ճանապարհ տունդարձի*, հավելված, ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 2000:

Резюме

Альберт Мушегян

Оценка Иммануила Канта о гражданской роли армянских торговцев и армянский характер по Гете

Статья анализирует армянский национальный характер, характеристику культурных восприятия в произведениях И.Канта, Ксенофонта, Агатангехоса, М. Гераца, Томаса Лоуренса, Армин Теофил Вегнера с культурной точки зрения, которые имеют историческую ценность и определяют место и роль армян в мире.

Summary

Albert Musheghyan

Immanuel Kant's Valuation about the Civil Role of Armenian Merchants and the Armenian Character by Geothe

The article analyses Armenian national character, characterization of cultural perceptions in the works of Immanuel Kant, Xenophon, Agatangeghos, M. Heratsi, Thomas Lawrence, Armin Teofil Wegner from the cultural point of view, which have historical value and define the place and role of Armenians in the world.